



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**Հանրային հեռուստաընկերության
<<Լուրեր>> լրատվական,
Հայկուշ Ասլանյանին
(էլ. հասցե՝ haykush.mtv@gmail.com)**

Ի պատասխան էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով ներկայացված Ձեր հարցման՝ իրազեկման կարգով տեղեկացվում է, որ << Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 24-ի ՈՍՈ/63-2021 որոշմամբ Ազատ Գրիգորյանը նշանակվել է << Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Նույն համայնքի նախկին ղեկավար Ռազմիկ Մարգարյանի կողմից հայցադիմում է ներկայացվել << վարչական դատարան՝ << Արմավիրի մարզպետի նշված որոշումն առ ոչինչ ճանաչելու պահանջով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ << վարչական դատարանի 2021 թվականի հունիսի 18-ի որոշմամբ (վարչական գործ ԹԻՎ ՎԴ/5732/05/21) Ռազմիկ Մարգարյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ մեկ այլ որոշմամբ, նույն վարչական գործով որպես երրորդ անձ ներգրավվել է Ազատ Գրիգորյանը:


Տեղեկացվում է նաև, որ << վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն՝ վիճարկման հայցադիմումը վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը՝ մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է և նշված վարչական գործին կարող եք ծանոթանալ՝ այցելելով <<**DataLex**>> դատական տեղեկատվական համակարգ:

Հարգանքով՝

Ա. Հովհաննիսյան

 Недействительная подпись



VERIFIED OCSP 23.07.2021 08:50:23 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Կար.՝ Ն. Պեղրոսյան
Լ.Հարությունյան

Հեռ.՝ 023727649